# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք, ՀՀ,
Կոտայքի մարզ, գ. Գողթ, հրապարակի 1, Հեռ.
096 33 32 32 , goghthamaynq@yandex.ru

N 241
*21 նոյեմբեր 2018թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Ի Պատասխան Ձեր 01/11/2018թ թիվ 01/15.1/6086-18 գրության, տեղեկացնում ենք, որ 2018թ նոյեմբերի 28-ին Գողթի համայնքապետարանում տեղի կունենա ավագանու հերթական նիստ:

Կից ներկայացվում է ավագանու նիստի նախագիծը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Կարապետյան

**ՆԱԽԱԳԻԾ 39**

ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14 հոդվածի՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել Գողթ համայնքի ավագանու 2018թ նոյեմբերի 27-ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը

1. Գողթ համայնքի ավագանու 2017թ դեկտեմբերի 21-ի թիվ 48-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. <<Գողթի կոմունալ ծառայություններ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /ՀՈԱԿ/ ստեղծելու մասին:
3. <<Գողթի կոմունալ ծառայություններ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /ՀՈԱԿ/ կանոնադրությունը հաստատելու մասին:
4. Գողթ համայնքի ավագանու 2018թ հոկտեմբերի 19-ի թիվ 36 և թիվ 37 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ 40-Ն**

---

ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 48-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

______________________________

*ՁԵկ. ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ*

## ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գողթ համայնքի ավագանու 2017թ դեկտեմբերի 21-ի <<Գողթ համայնքի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 48-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ 41**

<<ԳՈՂԹԻ ԿՈՄՈՒՆԱԼ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
/ՀՈԱԿ/ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Ստեղծել <<Գողթի կոմունալ ծառայություններ>> համյնքային ոչ առևտրային կազմակերպություն /ՀՈԱԿ/:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ 42**

<<ԳՈՂԹԻ ԿՈՄՈՒՆԱԼ<br>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ>><br>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ<br>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ /ՀՈԱԿ/<br>ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ<br>ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել <<Գողթի կոմունալ ծառայություններ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*<br>ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 36 ԵՎ N 37
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Գողթ համայնքի ավագանու 2018թ հոկտեմբերի 19-ի <<Տրանսպորտային միջոցները խոտանված համարելու և տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման /վերահաշվառման/ համակարգչային շտեմարանից հանելու մասին:>> N 36 որոշման նախաբանում <<Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 708-Ա որոշումը>> բառերը փոխարինել <<Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի>> <<հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 708-Ա որոշումը>> բառերով:

2. Գողթ համայնքի ավագանու 2018թ հոկտեմբերի 19-ի <<Գողթ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ. Նշանակության վարելահողը և արոտավայրերը աճուրդ վաճառքի եղանակով օտարելու մասին>> N 37 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը. <<Ղեկավարվելով ՀայաստանիՀանրապետության <<Հողային օրենսգրքի>> 63 հոդվածի 3-րդ կետի պահանջները և հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին կետի 21-րդ մասի պահանջները>> նախադասությունը փոխարինել << Համաձայն <<Հողային օրենսգրքի>> 63 հոդվածի 3-րդ մասի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին կետի 21-րդ մասի>> նախադասությունով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ